

ARPINE ABOVYAN COMPARATIVE ADVANTAGES OF EXPORT IN RA

Key words: *comparative advantages of export, export structure, commodity groups, intersectoral specialization index, revealed comparative advantage index.*

One of the main channels for ensuring economic growth, increase of living standards and global economic integration is export volume expansion and its structure optimization. For this purpose it is necessary to reveal the types of manufactured products related to which the country has comparative advantages in export. Within this article the patterns of RA's exports are studied, comparative advantage indices are estimated, based on which some commodity groups are revealed which provide evidence of potential for further expansion of production and export.

ԷՄՄԱ ԱԹԱՅԱՆ

*Բանկային գործ,
բակալավորիպ, 4-րդ կուրս*

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *բանկային համակարգ, ֆինանսական կայունություն, արտաքին և ներքին գործոններ, ռիսկեր, դրամավարկային քաղաքականություն*

ՀՀ բանկային համակարգը ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցն է, որին բաժին է ընկնում ֆինանսական ակտիվների գերակշիռ մասը: Այս պարագայում ֆինանսական հաստատությունների կայունության գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում են հենց բանկային համակարգի գործունեության ռիսկերի բացահայտումն ու գնահատումը: Հոդվածում ներկայացվել են ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա ազդող հիմնական գործոնները:

ՀՀ բանկային համակարգը մեր երկրի տնտեսության զարգացման գործընթացում կարևորագույն դերակատար է: Բանկային համակարգը տնտեսության մեջ հիմնական ֆինանսական միջնորդն է, և առանց դրա արդյունավետ և կայուն գործունեության, անհնարին է տնտեսության առաջընթաց զարգացումը:

Հայաստանի բանկային համակարգը երկմակարդակ է, որի առաջին մակարդակում ՀՀ կենտրոնական բանկն է, իսկ երկրորդ մակարդակում երկրի տարածքում գործող 17 առևտրային բանկերն են ու նրանց մասնաճյուղերը: Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների շուրջ 87,3%-ը:¹ Այս պարագայում ֆի-

¹ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն 2017 թ. առաջին կիսամյակ, 2017թ., էջ 31:

նանսական հաստատությունների կայունության գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում են հենց բանկային համակարգի գործունեության ռիսկերի բացահայտումն ու գնահատումը:

Միջազգային արժույթային հիմնադրամի կողմից ֆինանսական կայունության վերաբերյալ տրվում է հետևյալ սահմանումը. «Ֆինանսական համակարգը, անկախ վերջինիս չափից կամ կառուցվածքային բարդությունից, կայուն է, երբ այն ունակ է մեծացնել տնտեսական բարեկեցությունը և համահարթեցնել ցանկացած տատանում, որը կարող է տեղի ունենալ հնարավոր բացասական ցնցումների հետևանքով»:¹ ՀՀ կենտրոնական բանկի բնորոշմամբ ֆինանսական կայունության ապահովումը ֆինանսական համակարգը փլուզումից կամ խափանումից զերծ պահելն է այնպես, որ համակարգը շարունակի գործել անհրաժեշտ իրացվելիության մակարդակով, գործարքների և փոխանցումների անխափան իրականացմամբ, տնտեսությունում խնայողությունների ներդրման ունակության պահպանմամբ:

Ֆինանսական կայունության վերլուծությունը ենթադրում է այն հավանական ռիսկերի քննումը, որոնք կարող են վտանգել ֆինանսական համակարգի և տնտեսական ակտիվության դրական զարգացումները: Տվյալ ռիսկերը և անբարենպաստ տատանումները կարող են լինել ինչպես ներծին (էնդոգեն), այնպես էլ արտածին (էկզոգեն) բնույթի:²

Հավանական ռիսկերի բացահայտման և զսպման նպատակով Կենտրոնական բանկը շարունակաբար իրականացնում է ներքին տնտեսության և արտաքին աշխարհի ֆինանսական համակարգի և մակրոմիջավայրի ցուցանիշների վերլուծություն, շուկաների մշտադիտարկում, հայրենական վճարահաշվարկային համակարգերի հսկողություն:

Ֆինանսական կայունության գնահատման գործիք է նաև ԱՄՀ-ի կողմից մշակված *ֆինանսական կայունության ցուցանիշների համակարգը*:

Հայաստանի ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշները և դրանց շարժընթացը հնգամյա կտրվածքով ներկայացված է հավելված 1-ում:


ՀՀ բանկային համակարգում ֆինանսական կայունության ցուցանիշներից ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը նվազման միտում ունի. 2017 թ. դեկտեմբերին, 2016 թ. դեկտեմբերի նկատմամբ, նվազել է 1,6%-ային կետով և կազմել 18.5% (նվազագույն սահմանաչափը՝ 12%): Առևտրային բանկերում կապիտալի համարժեքության նվազումը տեղի է ունեցել հիմնականում վարկային պորտֆելի ընդլայնման, կապիտալի հաշվին վարկերի տրամադրման, ինչպես նաև ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների կրճատման հետևանքով: Չնայած ցուցանիշի նվազման միտմանը, միևնույն է, այն գերազանցում է նորմատիվային ցուցանիշը և ապահովում է բանկային համակարգի կայունությունը:

Եթե բանկը վարկերը տրամադրում է կապիտալի հաշվին, այլ ոչ թե ավելի շատ ներգրավված ավանդների օգնությամբ, նշանակում է, որ ընդհանուր կապիտալի մասնաբաժինը ռիսկով կշռված ակտիվների մեջ ավելի քիչ է, ինչը վկայում է այն մասին, որ բանկի ֆինանսական կայունությունը նվազում է, հակառակ դեպքում բանկի ֆինանսական կայունությունը բարձր է,

¹ International Monetary Fund. The financial stability report 2009:

² Ст'ю Тарханов Е.А., Устойчивость коммерческих банков, 2003, էջ 180:

սակայն միջոցների օգտագործման արդյունավետությունն է փոքր:¹ Այսինքն, կարելի է նկատել, որ որքան բարձր է կապիտալի համարժեքության ցուցանիշը, այնքան բարձր է բանկային համակարգի ֆինանսական կայունությունը, և որքան այդ ցուցանիշը ցածր է, այնքան բանկերը ֆինանսապես անկայուն են:



Գծապատկեր 1. ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների մեծությունների շարժը²


Վարկային շուկայում, առևտրային բանկերի գործունեության ակտիվացման պայմաններում, արձանագրվել է իրացվելիության որոշակի նվազման միտում: 2016 թ. դեկտեմբերի համեմատ առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 0,4 և 29,1%-ային կետերով և կազմել 32,1% և 141,7% (նվազագույն սահմանաչափերը՝ 15% և 60%): Առաջին խմբի արտարժույթների ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 0.2 և 16.6%-ային կետերով և կազմել 20.8% և 86.3% (նվազագույն սահմանաչափերը՝ 4% և 10%): Ինչպես տեսնում ենք, բանկերի իրացվելիության ցուցանիշները կրկնակի գերազանցում են նորմատիվային նվազագույն սահմանաչափերը, այսինքն՝ ՀՀ բանկային համակարգը ոչ միայն չունի իրացվելիության խնդիր, այլև առկա է ավելցուկային իրացվելիություն:

ՀՀ բանկային համակարգի ակտիվների գերակշիռ մասը (2017 թ. ընդհանուր ակտիվների 60,7%-ը) վարկերն են, այդ իսկ պատճառով ՀՀ բանկային համակարգում վարկային ռիսկը շարունակում է մնալ առանցքային խնդիրներից մեկը: Գծապատկեր 2-ում ներկայացված է ՀՀ բանկային համակարգի չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում (2007-2017 թթ.): Գծապատկեր 2-ից նկատելի է, որ 2008 թ. համաշխարհային ճգնաժամը էա-

¹ Տե՛ս Ройз П.С., Банковский менеджмент. М.: Дело Лтд, 1995, էջ 390:

² Այս և մյուս գծապատկերը կազմվել են հեղինակի կողմից՝ հիմնվելով ԿԲ-ի և ՀՀ բանկերի հրապարակած հաշվետվությունների վրա:

պես ազդել է խնդրահարույց վարկերի ծավալի մեծացման վրա և 2008 թ. 4,4%-ից 2009 թ. 1-ին կիսամյակում հասել է 10%-ի, իսկ երկրորդ կեսին նվազելով՝ տարեվերջին կազմել է ընդհանուր վարկերի 4,8%-ը: 2017 թ. չաշխատող վարկերը նվազման միտում ունեին:



Գծապատկեր 2. ՀՀ բանկային համակարգի չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում (2007-2017թթ.)

2017 թ. 1-ին կիսամյակի տվյալներով չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի (իսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի ռիսկային դաս ունեցող) տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում նվազել է 1.0%-ային կետով և կազմել 5.8%: Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է հանրային սննդի ու այլ սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության և արդյունաբերության վարկերում՝ համապատասխանաբար 11.9%, 9.7% և 7.9%:


2017 թ. ընթացքում պահպանվել է բանկային համակարգի հաշվեկշռի դուրարացման նվազման միտումը, ընդ որում առավել արտահայտված է եղել ավանդների դուրարացման նվազման միտումը: 2017 թ. ընդհանուր ավանդներում դրամային ավանդների ծավալը, 2016 թ. համեմատ, աճել է 21,2%-ով և կազմել ընդհանուր ավանդների 39,6%-ը, իսկ արտարժույթային ավանդներն աճել են ընդամենը 1,8%-ով, և դրանց տեսակարար կշիռն ընդհանուր ավանդներում նվազել է 4,1%-ային կետով՝ տարվա վերջին կազմելով 60,4%:

Հայաստանյան առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները շարունակում են առավել շատ միջոցներ ներգրավել արտարժույթով և, հետևաբար, արտարժույթային ռիսկից խուսափելու նպատակով ձգտում են դրանք տեղաբաշխել այն արտարժույթով, որով ներգրավել են: 2017 թ. արտարժույթային վարկերը եղել են 1 տրլն 414 մլրդ դրամ՝ կազմելով ընդհանուր վարկերի 49,8%-ը և 2016 թ. նկատմամբ աճելով 10,1%-ային կետով: 2016 թ. համեմատ 7,8%-ով աճել են նաև դրամով տրամադրված վարկերը, որը հիմնականում պայմանավորված է եղել դրամով տրամադրվող հիփոթեքային վարկերի ծավալների աճով:

Դոլարացման բարձր մակարդակը Հայաստանի տնտեսությունը կախյալ վիճակում է պահում արտարժույթից՝ դրանից բխող բացասական հետևանքներով: Տնտեսությունը դառնում է ավելի խոցելի, նվազում է դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը: Այսինքն, ՀՀ բանկային համակարգում առկա է արտարժույթային ռիսկ, ինչը իր հերթին կարող է հանգեցնել վարկային, ինչպես նաև իրացվելիության ռիսկի:

ՀՀ բանկային համակարգում 2017 թ. տոկոսային եկամուտներ ապահովող ակտիվները կազմել են ընդհանուր ակտիվների գերակշիռ մասը՝ 78,3%-ը (3 տրլն 419 մլրդ դրամ)՝ նախորդ տարվա համեմատ աճելով 8.5%-ով: Ընդհանուր տոկոսային եկամուտները 2017 թ. կազմել են 362,7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11,2%-ով, իսկ տոկոսային ծախսերը՝ 201,5 մլրդ դրամ՝ 2016 թ. համեմատ աճելով 8,7%-ով (2016 թ.՝ 185,1 մլրդ դրամ): Հետևաբար, ՀՀ բանկային համակարգին սպառնացող ռիսկ կարող ենք համարել նաև տոկոսադրույքի ռիսկը: Դոլարացված տնտեսության պայմաններում բանկերի հաշվեկշիռները ևս հիմնականում դոլարային են, իսկ արտաքին շուկաներից ներգրավված դոլարային միջոցների տոկոսադրույքները, որպես կանոն, կապված են LIBOR (London Interbank Offered Rate) տոկոսադրույքի հետ: Երբ ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը բարձրացնում է տոկոսադրույքը, LIBOR-ն անմիջապես բարձրանում է, հետևաբար, բարձրանում են նաև մեր երկրում փոխառությունների տոկոսադրույքները: Սա ՀՀ բանկային համակարգի վրա արտաքին շուկաների ուղղակի և շատ լուրջ ազդեցության դրսևորում է: Բացի դրանից, բանկերի տոկոսադրույքների ձևավորման վրա ազդում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունը: Վերջինս նույնպես կարող է բացասական ազդեցություն թողնել բանկի զուտ տոկոսային եկամուտների վրա: ՀՀ տնտեսությունը մեծ կախում ունի հումքի միջազգային գներից: Խոսքն առաջին հերթին մետաղների գների մասին է, որոնք մեր տնտեսության շարժիչ ուժերից մեկն են: Հայաստանը արտահանող երկիր է, և համաշխարհային տնտեսության մեջ պղնձի գների ցանկացած նվազում ազդում է Հայաստանի եկամուտների վրա, վերջինս էլ՝ տնտեսական աճի: Ինչպես գիտենք, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության խնդիրները՝ ցածր գնաճը և բարձր տնտեսական աճը, միմյանց հակասում են, որն էլ իր բացասական հետևանքը կարող է ունենալ ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա: Հետևաբար, կարևոր է ուշադրություն դարձնել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության համակարգմանը:

Տրանսֆերտների զգալի ներհոսքը, հատկապես՝ Ռուսաստանից (դրամական փոխանցումների 62%-ը), նույնպես կարևոր հիմնախնդիր է բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման համար, քանի որ ՌԴ-ն համարվում է Հայաստանի աշխատանքային միգրացիայի խոշորագույն երկիր: Այսինքն, Ռուսաստանի տնտեսությունում տեղի ունեցող փոփոխությունները (հատկապես պայմանավորված էներգակիրների գների փոփոխությամբ) իրենց արձագանքն են ունենում ՀՀ տնտեսության և տրանսֆերտների ներհոսքի վրա, իսկ տրանսֆերտների նվազումն էլ կարող է բացասաբար անդրադառնալ վարկառուների վարկունակության վրա և բանկերի համար վարկային ռիսկեր առաջացնել:



Գծապատկեր 3. Հայաստանի օտարերկրյա տրանսֆերտները՝ ըստ վճարային հաշվեկշռի (մլն դրամ)

2015 թ., նախորդ տարվա համեմատ, նկատվել է մասնավոր տրանսֆերտների զգալի անկում՝ 11,4% ներհոսքի նվազում: Ռուսաստանի տնտեսության վատթարացումը Հայաստանում արտահայտվեց դրամական ներհոսքի նվազմամբ: Այս միտումը շարունակվեց նաև 2016 թ. ընթացքում, երբ արտերկրից ստացվող միջոցների նվազումը, աշխատավարձի ցածր աճի տեմպը, նախորդ տարիների համեմատ բարձր վարկային բեռն իրենց ազդեցությունն ունեցան ռեզիդենտ տնային տնտեսությունների վարկունակության, ինչպես նաև վարկավորման ծավալների վրա: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 3-ում, 2017 թ. տրանսֆերտները աճել են՝ հասնելով 499.8 մլն դրամի:

Այսպիսով, բանկային համակարգում վարկային ռիսկը շարունակում է մնալ առանցքային խնդիրներից մեկը, որը զսպելու նպատակով ՀՀ բանկերի համար նպատակահարմար է վարկային պորտֆելը բազմազանեցնել (դիվերսիֆիկացնել) տարբեր չափանիշներով, ինչպես նաև իրականացնել տրամադրած վարկերի ընթացիկ մշտադիտարկում՝ ապագայում սպասվելիք խնդիրները վարկառուից շուտ բացահայտելու համար: Վարկի ապահովվածության առումով հարկավոր է մշտադիտարկում կատարել՝ շուկայում անշարժ կամ շարժական գույքի իրացման գները կանխատեսելու և սահմանելու համար:

Դոլարացման բարձր մակարդակը Հայաստանի տնտեսությունը կախյալ վիճակում է պահում արտարժույթից՝ դրանից բխող բացասական հետևանքներով: Տնտեսությունը դառնում է ավելի խոցելի, նվազում է դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը: Այսինքն, ՀՀ բանկային համակարգում առկա է արտարժույթային ռիսկ, ինչն իր հերթին կարող է հանգեցնել վարկային, ինչպես նաև իրացվելիության ռիսկի:

Տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունները կարող են բանկերի համար կորուստներ առաջացնել: Քանի որ հիմա շուկայական տոկոսադրույքները ցածր են, և սպասվում է դրանց հետագա աճ, ապա բանկերին առաջարկվում է ավելացնել միջոցների ներգրավման ժամկետները, ինչպես նաև՝ փոփոխուն տոկոսադրույքով վարկերի ծավալը: Ներքին և արտաքին քաղաքական զարգացումները, միջազգային շուկաներում մետաղների, էներգակիրների գների փոփոխությունը, տրանսֆերտների ներհոսքի կրճատումը՝ պայմանավորված այլ երկրների (հիմնականում Ռուսաստանի) տնտեսական իրավիճակով, իրենց բացասական ազդեցությունը կարող են ունենալ ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ՀՀ բանկային համակարգը առանձնանում է կապիտալացման և իրացվելիության բարձր մակարդակով, որը վճարունակության, հետևաբար՝ կայունության, կարևորագույն նախապայմանն է, իսկ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշների շարժընթացը վկայում է, որ ՀՀ բանկային համակարգը կորցնում է ավելցուկային կայունությունը: Այնուհանդերձ, իրավիճակը գտնվում է վերահսկելի միջակայքում, և ԿԲ որոշումները համակարգը զերծ են պահում էական ցնցումներից:

Հավելված 1

ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշների շարժընթացը 2013-2017 թթ.¹

Ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշները բանկային համակարգի համար (տոկոսային արտահայտությամբ)	Դեկ. 2013	Դեկ. 2014	Դեկ. 2015	Դեկ. 2016	Դեկ. 2017	2017 թ. բացարձակ շեղումը՝ 2016 թ. համեմատ (+,-)	2017 թ. հարաբերական շեղումը՝ 2016 թ. համեմատ (%)
Նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին	16.7	14.5	16.2	20.1	18,5	1,6	7.9
Նորմատիվային հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին	14.5	12.7	14.0	15.0	15,2	0,2	1,3
Չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին	4.5	7.0	8.0	9.9	5,5	-4,4	44,4
Շահութաբերությունն ըստ ակտիվների	1.9	1.0	-0.5	0.42	0,9	0,48	114,2
Շահութաբերությունն ըստ կապիտալի	12.0	6.4	-3.5	2,65	5,6	2,95	111,3
Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունն ընդհանուր ակտիվներին	29.1	25.1	28.0	28.5	32,1	3,6	12,6
Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ցպահանջ պարտավորություններին	142.3	129.4	142.4	150.1	141,7	-8,4	5,5

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ՝ <https://www.cba.am/am/SitePages/finstabilitycucanish.aspx>:

ЭММА АТАЯН ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОЙ УСТОЙЧИВОСТИ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ АРМЕНИИ

Ключевые слова: банковская система, финансовая устойчивость, внутренние и внешние факторы, риски, денежно кредитная политика.

Банковская система Армении является самым большим участником финансового сектора, которому принадлежит доминирующая часть финансовых активов. В этом случае с точки зрения оценки устойчивости финансовых учреждений особенно важна определение и оценка рисков влияющих на деятельность банковской системы. В статье представлены основные факторы, влияющие на финансовую стабильность банковской системы Армении.

EMMA ATAYAN THE PROBLEMS OF FINANCIAL STABILITY OF BANKING SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: banking system, financial stability, internal and external factors, risks, monetary policy.

Banking system of the Republic of Armenia is the largest participant of financial sector, which owns the dominant part of financial assets. In this case, from the point of view of assessing the stability of financial institutions, it is especially important to determine and assess the risks affecting the activity of the banking system. The main factors affecting the financial stability of the Armenian Banking system are presented in the article.

ՀՈՒՓՍԻՄԵ ԱԼԲԵՐՏՅԱՆ

Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի), մագիստրատուրա, 1-ին կուրս

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. առևտրային բանկ, ֆինանսական ակտիվ, տեղաբաշխված միջոց, աշխատող վարկ, խնդրահարույց վարկ, երաշխիքային ֆոնդ

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ առևտրային բանկերում կիրառվող ֆինանսական ակտիվների հիմնական տեսակները, դրանց տնտեսական բովանդակությունը, հաշվապահական հաշվառման մոտեցումները, տեսական դրույթների հիման վրա ուսումնասիրվող առևտրային բանկում իրականացնել այդ ակտիվների վերլուծությունը: Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվները տարատեսակ են և բազմաբնույթ: Սակայն կարարված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ բանկային համակարգում առավել կիրառական գործիքներ են վարկերը: Վարկերն ապահովում են բանկերի եկամտի մեծ մասը, սակայն առաջ են բերում նաև կորուստների մեծ ռիսկ: Այդ իսկ պատճառով չափազանց կարևորվում է դրանց արդյունավետ կառավարմանն ուղղված միջոցների բացահայտումը և կիրառումը: Մասնավորապես առաջարկվում է երաշխիքային ֆոնդերի ներդրումը, որոնք էականորեն կնվազեցնեն վարկային ռիսկի մակարդակը ՀՀ-ում: